ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 2/1

20 հունվարի 2015 թ.

Քննարկվեց «Գամ Քոնսալթ» ՍՊԸ 22.12.2014 թ-ի բողոքը ավելացված արժեքի հարկի վճարման հաշվետու ժամանակաշրջանը սխալ ընտրելու հետևանքով կիրառված պատասխանատվության միջոցները վերանայելու վերաբերյալ:

«Գամ Քոնսալթ» ՍՊԸ բողոքում բերված փաստարկները.

Ի պատասխան 12.12.2014թ. Մաշտոցի ՀՏ ներկայացված դիմումի «Գամ Քոնսալթ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև ընկերություն) տեղեկացել է, որ ընկերության դեբետային մնացորդից «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն պակասեցվել է 835.730 դրամ գումար: Հաշվարկված տուգանքի գումարներն Ընկերության նկատմամբ հաշվարկվել են 2014թ.-ի ընթացքում ԱԱՀ-ի գծով եռամսյակային հաշվարկների փոխարեն ամսեկան հաշվարկներ ներկայացնելու հետևանքով:

Ընկերությունը գտնում է, որ կատարված գործողություններն անհիմն են և չեն բխում օրենքի պահանջներից, հետևյալ հիմնավորմամբ և պատճառաբանությամբ:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև օրենք) 5-րդ հոդվածի, մեջբերում՝ Վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպաակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են:

Տվյալ դեպքում «Գամ Քոնսալթ» ՍՊԸ ՍՊԸ-ի կողմից հարկային մարմին ներկայացվել են համապատասխան հաշվարկները ԱԱՀ-ի գծով և սահմանված ժամկետում կատարվել են դրանցով առաջացած պարտավորությունները: Ավելին, ՀՀ Ֆինանսների Նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը իր բազմաթիվ որոշումներով անդրադառնալով տվյալ պայմաններում «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով սահմանված տուգանքների հաշվարկման հանգամանքներին հայտնել է իր դիրքորոշումը: Մասնավորապես՝ 23.09.2014թ. թիվ 18/6 որոշմամբ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24–րդ հոդվածով նախատեսված պարտավորության միջոցը բողոքարերի նկատմամբ կիրառելու համար հանձնաժողովը նշել է, մեջբերում՝ «... ԱԱՀ–ի եռամսյակային հաշվարկներ ներկայացնելու փոխարեն ԱԱՀ-ի ամսեկան հաշվարկներ ներկայացնելու պայմաններում պետական բյուջե վճարվող ԱԱՀ-ի չափը չի փոփոխվել, այսինքն՝ դրա հետևանքով պետական բյուջե պակաս ԱԱՀ-ի գումար չի վճարվել: Ընկերությունը ԱԱՀ–ի ամսեկան հաշվարկներ ներկայացնելու արդյունքում ընկերության կողմից ԱԱՀ-ի գծով պարտավորությունները կատարվել են սահմանված ժամկետից շուտ»: Արդյունքում հանձնաժողովը գտել է, որ բողոքարերի կողմից «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված դրույթների կիրառման դեմ բերված բողոքը ենթակա է բավարարման և այն բավարարել է:

Նույն դիրքորոշումն է հայտնել նաև հանձնաժողովը իր 29.11.2013թ. թիվ 57/3 որոշմամբ:

Օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ վարչական մարմիններին արգելվում է անհավասար մոտեցում ցուցաբերել միատեսակ փաստական հանգամանքների նկատմամբ, եթե առկա չէ դրանց տարբերակման որևէ հիմք:

Ելնելով վերոգրյալից ընկերությունը խնդրում է վերացնել (անվավեր ճանաչել) Մաշտոցի ՀՏ կողմից «Գամ Քոնսալթ» ՍՊԸ-ի նկատմամբ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն հաշվարկված 835.730 դրամ տուգանքի գումարը և այդ գումարը վերականգնել ընկերության հաշվառման քարտում:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «Գամ Քոնսալթ» ՍՊԸ կողմից 2014 թ-ի հունվար ամսից մինչև օգոստոս ամիսն (ներառյալ) ընկած ժամանակահատվածի համար հարկային մարմին են ներկայացվել ավելացված արժեքի հարկի ամսական հաշվարկներ: Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընկերության 2013 թ-ի իրացման շրջանառությունը չի գերազանցել 100 մլն դրամը, հետևապես ղեկավարվելով «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի դրույթներով, պետք է ներկայացվեին ԱԱՀ-ի եռամսյակային հաշվարկներ: Ընդ որում, հարկային մարմինը միայն 2014 թ-ի հուլիս ամսին է ընկերությանը տեղեկացրել վերջինիս համար ավելացված արժեքի հարկի վճարման հաշվետու ժամանակաշրջանը յուրաքանչյուր եռամսյակը համարվելու մասին: Այնուհետև, ընկերությունում իրականացվել է կամերալ ուսումնասիրություն, որի արդյունքում 15.10.2014 թ-ին կազմված արձանագրությամբ ևս ընկերությանը հայտնվել է ավելացված արժեքի հարկի վճարման հաշվետու ժամանակաշրջանը յուրաքանչյուր եռամսյակը համարվելու վերաբերյալ:

Հաշվի առնելով վերոգրյալ փաստական հանգամանքները և ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 15.1-րդ հոդվածի դրույթներով ընկերության կողմից ներկայացված ԱԱՀ-ի ամսական հաշվարկները համարվել են չներկայացված: Արդյունքում, ընկերության նկատմամբ կիրառվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածներով նախատեսված պատասխանատվության միջոցը՝ գումարով 835.730 դրամ:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ ընկերության կողմից ԱԱՀ-ի եռամսյակային հաշվարկներ ներկայացնելու փոխարեն ԱԱՀ-ի ամսական հաշվարկներ ներկայացվելու պայմաններում պետական բյուջե վճարվող ԱԱՀ-ի գումարների չափը չի փոփոխվել, այսինքն՝ դրա հետևանքով պետական բյուջե պակաս ԱԱՀ-ի գումար չի վճարվել: Ընդհակառակը, ԱԱՀ-ի ամսական հաշվարկներ ներկայացվելու արդյունքում ընկերության կողմից ԱԱՀ-ի գծով պարտավորությունները կատարվել են սահմանված ժամկետից շուտ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն. «Վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց

ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են»:

Հանձնաժողովի համոզմամբ, տվյալ դեպքում գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ ավելացված արժեքի հարկի հաշվարկներն ընկերության կողմից ամսական կտրվածքով ներկայացվել են թյուրիմացության հետևանքով, այն մեխանիկական սխալի արդյունք է, այսինքն՝ թույլ տրված խախտումը, ըստ էության, կրում է ձևական բնույթ, քանի որ ընկերության վրա դրված պարտականությունները բովանդակային առումով, կատարված են:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի դրույթներով Հանձնաժողովը գտնում է, որ «Գամ Քոնսալթ» ՍՊԸ բողոքը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո ր ո շ ու մ է՝

«Գամ Քոնսալթ» ՍՊԸ 22.12.2014 թ-ի բողոքը բավարարել:

Հանձնաժողովի նախագահ՝ **Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**